ՀԱՆ ՏԱՐԻ | ՁՈՐԵՔՇԱԲԹԻ 23 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1906—ՎԱՐՆԱ | ԹԻՒ 76

ՓԱՅՄԱՆ

ՊՈՒԼԳԱՐԻԱ
Տարեկան 12 Ֆր.
Վեցամսեայ 6 Ֆր.
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ
Ձեռագիր թղթակցութիւնները չեն տրուիր
Տարեկան 14 Ֆր.
Վեցամսեայ 7 Ֆր.
ԱՄԵՐԻԿԱ
Տարեկան 2.60 Տոլար
Վեցամսեայ 1.50 »
ԿԱՆԽԻԿ

Ծանուցման տողը
20 սանթիմ

ԱՐՇԱԻՈՆՔ

ԼՐԱԳԻՐ

ԱՋԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՁՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ԱՍՑԷ

Rédaction et Journal
« ravounk »
VARNA (Bulgarie)

Рѳдакция
и ВѢСТНИКЪ
«Иразунк»
ВАРНА

Գրութիւնք ու չեն տրուիր

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ

Այս ժամուս մեր գրասեղանին վրայ ունինք Ֆերիսի մէջ նոր հրատարակուիլ սկսած «Երկրի Ձայնը» հայ չաթաթաթերթը և բարիզի մէջ հրատարակուող «Թէրագդը» թուրք թերթը։ Այս երկու հրատարակութիւնները ալ գրեթէ միևնոյն նպատակի ձգտող նոր օրգաններ են, որոնք, կը կարծենք թէ, իրենց ստուարաթիւ հետեւողները պիտի ունենան ի մօտոյ և շատ մը հայ ու թուրք թերթեր պիտի ուժ տան անոնց պաշտպանած գաղափարին և ցոյց տուած ուղղութեան։

«Թէրագդը» թուրքերէն թերթը իրեն նպատակակետ ցոյց կուտայ Թուրքիոյ մէջ բնակող ամեն ազգէ ու կրօնքէ բնակիչներուն իրաւունքները հաւասարաբար յարգող կառավարութիւն մը ձեռք բերել միացեալ ջանքերով, և ապակեդրոնացման դրութեամբ ցեղափոխական խումբերու պատկանող և ազատական շատ մը հայերու մտքերը ևս արդէն հաշտ են այս գաղափարին։ Հ. Ց. Դաշնակցութեան օրգան «Դրօշակն» ալ իր վերջին թուով «Թուրքիոյ բոլոր գործօն տարրերէ ընդհանուր գօնկրէ մը կազմել, խորհրդակցիլ և օրուայ անյետաձգելի պահանջները վաղուայ կառավարութեան ներկայացնելու» առաջարկը ընելով, ինքզինք շատ մօտ ցոյց կուտայ «Թէրագդը» թուրք օրգանի գաղափարին։ Ահա «Երկրի Ձայն»ն ալ աւելի որոշ և մեկին ընթացք մը բռնել կը խոստանայ հայ ժողովուրդը դէպի այդ կողմը առաջնորդելու նպատակաւ։ Հոս խօսքը տանք այդ նոր թերթին որ Թրքահայ դատին նուիրուած է։

«Այս րոպէիս եթէ կան երկու բառեր, որոնք իրար ժխտում, իրար հայհոյում են։ դրանք հայ և թուրք բառերն են։

Մի շարք դէպքեր, որոնք իրանց ողբերգական չունինով ապշեցուցին մեր պատմական անցեալը և չարունակում են խռովել մեր ներկան։ կանգնեցրել են հայ և թուրք ժողովուրդներն իրար դէմ, սպառնալից, անխնայ ու ահարկու, ինչպէս երկու թշնամի, խելագար բանակներ։

«Ի՞նչն է բաժանում մեզ, երկու ժողովուրդներիս։

«Ի՞նչը չենք կարողանում կիսել։

«Մենք նոյն բռնակալութեան թաթի տակ ենք խոնարհել մեր գլուխը, նոյն ցաւի, նոյն դըժբաղդութեան արցունքն ենք լացլինում։

«Նայեցէք ձեր չուրջը։ Թուրք մասսան՝ իր թանձր նախապաշարմունքներով, իր անծայր տգիտութեամբ, իր անյատակ թշուառութեամբ, թիւրքիայում, պարսկաստանում թէ Ռուսաստանում, ինչպէս կենդանի մի մը արիւնաթաթաւ պատառ, նայեցէք յուսահատօրէն թպրտում է. որքան հայ մասսան, բռնակալութեան, չահագործութեան բռնութիւնների ձեռքում։

«Եւ սակայն մենք, տառապանքի եղբայրներս, միևնոյն դժբաղդութեան զոհերս, մի անլուր, ճչացող անգիտակցութեամբ, իրար հարարում ենք դահիճներ։

Մեր իւրաքանչիւրի մէջ բռնութեան, չահագործութեան, նախնապետիզմի չարագործ ոյժերը սնուցանում են փոխադարձ ատելութեան մի անդունդ հրեշ։

«Մեզ, ինչպէս և թուրքերին կարծես այդպէս է թւում, որ մենք ժամանակաւոր հիւրեր ենք, պատահական հարեւաններ, և մի գեղեցիկ օր էլ պէտք է բաժանուենք իրարից։

«Մենք մոռանում ենք, որ գրերով ապրել ենք իրար հետ, դարերով խմել ենք ուրախութեան և տրտմութեան միևնոյն բաժակից և, այսուհետև էլ, մի անողոքելի ճակատագրականութեամբ, պատմութեան և աշխարհագրութեան անգառնալի վճռով, ուզենք չուզենք պիտի չարունակենք ապրել կողք կողքի, նոյն բարուն և նոյն չարին ենթակայ։

«Հետեւաբար մենք ունինք քաղաքական և տնտեսական նոյն ակնկալութիւնները ու նոյն չահերը։

«Եւ, պէտք է ոգեւորուիք նոյն գաղափարներով, նոյն իդէալներով։

«Ինչպէս որ հայ ժողովուրդը Ռուսաստանում և պարսկաստանում իր բազդը չէ անջատում, չէ խորհում անջատել նոյն երկրներում ապրող միւս ժողովուրդների բաղդից, նոյնպէս էլ թիւրքահայը չպիտի բաժանէ իր ազատագրութեան դատը այն ժողովուրդի դատից, որոնց հետ անքակտելիօրէն կապուած՝ կըրում է միևնոյն բռնակալութեան հրէշաւոր լուծը։

«Հետեւաբար մենք ընդունում ենք միմիայն մի դատ, Թիւրքիայում — «ընդհանուր յեղափոխութեան դատը»։

«Եւ բնականաբար չենք կարող ընդունել այն՝ ինչ երկպառակութեան, բաժանման առիթ է ծառայում մեր բաղդակից ժողովուրդների միջև։

«Մենք վճռապէս դէմ ենք «առանձին յեղափոխութեան, առանձին չարժումների»։

«Ի՞նչ տուին մեզ մինչև այժմ եւրոպական զանազան դաշնագրերն ու զանազան յանձնառութիւնները, որոնց յոյսով կատարուել են այդ չարժումները։

«Զոհե՛ր, զոհե՛ր, զոհե՛ր։

«Դրանք, ինչպէս ցոյց պիտի տանք յառաջիկայում, յղացուել ու պատրաստուել են յօգուտ ո՛չ թէ մեզ, այլ Եւրոպայի։

«Քրիստոնեայ ու քաղաքակրթ Եւրոպան չահագործել է միայն մեր տառապանքը, մեր «դատը» գարձրել է իր ձեռքում աւելի սարսափերի, քան բիւրաւոր թնդանօթները, կարմիր բռնակալից պոկելու համար նորանոր զիջումներ։

«Եւրոպան, որի միջամտութեան պիղծ քաւարանի վրայ ողջակէզ ենք բերել մեր լաւագոյն յոյսերն ու լաւագոյն զաւակները, Եւրոպան, որի պատճառով վիհ է բացուել մեր և միևնոյն հողը իր արիւն-քրտինքով արգասաւորող ժողովրդի միջև, ո՛չ թէ իրաւունքի ու ազատութեան մի ասպետ է, այլ մի վեթխարի շեյլոկ, որ երկրպագում է աւելից աւելի վճարողին։

«Ասացէ՛ք, ի՞նչ չահ, ի՞նչ տուկս կարող է գտնել այդ շեյլոկը աւերակների մէջ իր նահատակ գլուխը լացող հայ ժողովրդի մօտ։

«Բաւակա՛ն է, որքան չնչասպառ վազեցինք ցնորքի արիւնոտ ճամբաներից։

«Մենք խաբուել ենք անցեալում։

«Գոնէ խոստովանելու քաջութիւնն ունենանք։

«Ընկնենք նոյն սխալի մէջ, չօրօրուենք պատրանքի նոյն մահացու երգերով։

«Հետեւաբար, մենք, կրկնում ենք, յանուն հասարակաց իսկական չահերի, յանուն ամենքիս համար թանկ արժող իդէալի, յանուն միևնոյն ցաւի համար մեր թափած ծովացքունքների ընդունում ու փառաբանում ենք միմիայն մի դատ Թիւրքիայում — «ընդհանուր յեղափոխութեան դատը»։

«Մանաւանդ այն պահին, երբ ռուս ու պարսիկ բռնակալութիւնները սարսելով՝ քարշ են տալու իրանց ետևից մահամերձ Աբդիլ-Համիդի բռնակալութիւնը այն պահին, երբ ռուս հերոս ու հոյակապ ժողովուրդն ամբողջ աշխարհի ուսուցիչն է հանդիսանում նոր կեանքի ներդաշնակ արշալոյսը բաց անելով իր առաջ, մերձպատ այն պահին, երբ ազատութեան չունչը ռուս և պարսիկ սահմաններից խուժելով դէպի Թիւրքիա՝ այնտեղ սուգի ու յուսահատութեան մէջ կուչ եկած ժողովուրդներին պէտք է ցնցէ ազատագրական կռուի արդարագործ ու առնական չզաջզուքթիւններով—մենք գտնում ենք միանգամայն վնասակար ու անմարդկային մեր դատը բաժանել բաղդակից ժողովուրդների դատից։

«Այն անօրինակ ոէժիմը, որի տակ հեծեծում է և՛ հայը, և՛ թիւրքը, և՛ քիւրդը, և՛ ասորին

և՛ եղիպտին, և՛ դիւրգին, և՛ յոյնը, և՛ հրէան, և՛ արաբը, և՛ ալբանացին, և՛ մակեդոնացին,–պէտք է տապալուի անխտիր նոյն ցեղերի և նոյն ժողովուրդներուն միահամուռ գրոհով։

«Դ՚ա է Գաղափարի, ինչպէս և Շահի հրամայողական պահանջը։

«Մենք, համերաշխ գործակցութեան մոլեռանդ պաշտպաններ, եղբայրութեան, սօցիալական արդարութեան անընկճելի առաքեալներ, պիտի ձգտենք միութեան կամուրջը նետել հայ և թուրք տառապող ու հարստահարուող մասսաներուն միջև, մղելու համար դիւցազնական պայքարը բռնակալութիւններուն ամենաճիւաղայինի դէմ։

«Ա՚ա ինչո՞ւ համար հրապարակ է իջել «Երկրի Ձայնը»։

ԳԵՐ. Տ. ԵՂՆԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Հայ թերթի մը մէջ կը կարդանք թէ վեհ. կաթողիկոսը Ատրպատականի (Պարսկաստան) Առաջնորդ կարգեր է զՏէր Եղնիկ եպիսկ. Ապահունի։

Կը ցաւինք որ հակառակ մեր, պուլկարահայոց այնչափ բաղձանքին և էն առաջ դիմումներու սկսած ըլլալուն, Եղնիկ եպիսկոպոսի նման պատուական եկեղեցական մը առաջնորդ ունենալու բաղդէն զրկուեցանք գէթ առայժմ։ Վեհ. կաթողիկոսին գլուխը կորսուած օրերուն հանդիպած ըլլալով մեր դիմումները, նա երկար ամիսներ տնտնաց և օրին մէկն ալ «Կ. Պոլսոյ Պատրիարգին դիմեցէք» ըսաւ, բայց երկու չաբաթ յետոյ տեսանք թէ Տ. Վաճատ վարդապետը կոնդակով մը ցցուած է մեր առջև իբր կաթողիկոսական նուիրակ։ Ի՚նչ տարօրինակ հակասութիւն կաթողիկոսին ընթացքին մէջ։ Բայց յետոյ համոզուեցանք թէ ռուս կառավարութեան Տ. Ցաճատ վարդապետը երկրէն արտաքսելը պատեհ առիթ է ընծայեր Նորին Վեհափառութեան՝ անոր ձեռքը կոնդակ մը տալով, զանի Պուլկարահայոց յանձնարարելու իբր նուիրակ։

Ի՞նչ ընենք. այլեւս ալ գոհ ենք ցնոր տնօրինութիւնեն։

Ձենք նախանձիր, այլ կը չընորհաւորենք մեր պարսկահայ եղբայրները Տ. Եղնիկ եպիսկոպոսի նման կարող Առաջնորդ մը ունեցած ըլլալնուն համար։ Իրօք պարսկահայերը աւելի բազմաթիւ և իրենց պետքերն բազմատեսակ ըլլալով, պուլկարահայերէս աւելի կարող, բանիբուն ու փորձառու բարձրաստիճան եկեղեցականի մը պէտք ունէին։ Տ. Եղնիկ եպիսկոպոս արեւելեան և մահմետական բարքերը լաւ ուսումնասիրած և երկար փորձառութիւններ ստացած է. ուստի ապահովապէս պիտի կրնայ ինքզինքը պատկառելի ընծայել պարսիկ կառավարութեան և նոյնիսկ իսլամ հասարակութեան առջև, որով մեծապէս օգտակար հանդիսանալ իր նոր հօտին։

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՑ ԳԻՒՂԱՑԻՆ Կը ԴԱՂԹԷ

Դատարկվուած են գիւղերը...

5—10 հոգուց բաղկացած գիւղացիների խմբեր է, որ թողնում են հայրենի գիւղը, տունը տեղը, ընտանիքը ու գաղթում դէպի քաղաքները.. իրանց ընտանիքը սովից ազատելու համար։ Գաղթելու պատճառները բազմաթիւ են։ Մի կողմից հայ-թուրքական կործանիչ ընդհարումները բնութեան սոսկալի պատիժները, միւս կողմից էլ խմբերի «անտանելի պոռնկ ները հայ գիւղացուն» միանգամից անտանելի դրութեան մէջ են ձգել չլսնցրել, որը չը գիտէ թէ ի՛նչ անէ, ո՞ւր կորչի որ ազատվի այդ ճնշող դրութիւնից։ Ամենահեշտ միջոցը բռնութիւնից ազատվելու՝— գաղթելն է օտարութիւն, որի կորստաբեր հետեւանքներն պարզ են։ Օր չ՚անցնում, որ Ղարաբաղից Ղափանի Մալից տասնեակներով գիւղացիներ չը թափվեն Բագու որ տեղ եւ չատերը անգործ մնալով՝ վիշները ծուռ մնացել են փողոցները չրջելիս...

Մեր հարցին թէ ինչո՞ւ էք թողնում գիւղերը նրանք պատասխանում են, որ ապրուստ չը կայ, հաց չի ճարվում մի քանի գիւղացիներ չեն կարողացել տափարակներում սովորականին պէս հողերը վարել, իսկ գիւղերի մօտ հանգերում ու լեռնային հողերում ցանածը ցանկալի եկամուտը չէ տուել։ Աստուած բարկացել է մեզ վրայ... «ւ եւ յետոյ իսր հոգոց քաշելով աւելցնում են «Մի բան էլ... ի՞նչ ասենք... վախենում ենք խօսքներս տեղ հասնի... մեր գիւղերի վրան կարգված գործիչները (հայ յեղափոխական գործիչները) մեզ չատ են նեղացնում... Ատծոյ տուած լեզուով անգամ չեն թողնում, որ ազատ մի բան ասես. վա՛յ քո գլխին, մտրակում են մեզ եւ հրամայում լռել եւ ինչ որ հրամայում են կատարել... է՛հ եղբայր մենք էլ մարդ ենք սիրտներս նեղանում է, հերոններիցս մենք մեր միսը ո տուում ենք, ամա զատ չի դառնում, չատ մտածում ենք եւ տեսնում, որ միայն այդ տեղից պէտք է հեռանանք որ ազատ չունչ քաշենք, նրանց երեսից ազատվենք։ ուրի՞շ ինչ կարող ենք անել— մի խօսքով մեր մարդկային պատուասիրութիւնը ոտնատակ են տալիս։ Մենք գառնում ենք բուրուկները մեր այն ազատ բնութեան ծոցում, որտեղ ամեն մի անասուն ու գազան իրան աւելի ազատ ու երջանիկ է զգում, քան թէ մենք։ Մեզ ամենատարրական իրաւունքից զրկում են, իւզում ես նկատես. որ պ. ներկայացուցիչը այս ինչ վճիռների մէջ սխալ է. գլխիդ բամփում են եւ լռեցնել տալիս։ էլ ի՞նչ սրտով կարող ենք գիւղում մնալ. գեռ չենք ասում, որ մեր վերջին կօպէկի վրան էլ ձէլ են տնկում, եւ մինչեւ չեն խլում, չեն բաւականանում. քանի՞ մէկը ասենք...»։

Այս պարզ ու անպաճոյճ փաստերը գառնացած սրտից ձեզ տալիս է իւրաքանչիւր գիւղական, հէնց որին ուզում էք հարցրէք նրանց գաղթելու պատճառների մասին։ Երեւոյթը չատ ցաւալի է։ Հայ գիւղերը դատարկվում են նրանք հալածվում են իրանց հայկական տներից, այո, հալվում են լուռ ու մունչ զգալով ապագայի անհաստատութեան դրութիւնը. չըը նրանց համար պատրաստվում է հարազատների ձեռքով։ Մենք ամբողջ սրտով ու հոգով միանում ենք. անկեղծ զաչնակցականի յայտնած ճշմարիտ ու անկեղծ բողոքին, Թող հանգիստ Թողնեն հայ գիւղացուն. յօնքը չինելու տեղ, աչքն էլ չը հանեն։

Այդ ձրիակերները, որոնք մարակի ապառնալիքով հայ գիւղացուն թալանում են օր ցերեկով, խլում են նրանցից ապրուստի վերջին մէյոցը Թող լաւ իմանան, որ նրանք պատասխանատու են ժողովրդի արդար զարոյթի առաջ... համբերութիւնն էլ չափ ու սահման ունի, ի չարը մի գործ դնէք ժողովրդի համբերութիւնը... անարդարութիւնը չափ ու սահմանից անցնում է, ժողովուրդը հոգեպէս ճնշվում է եւ չը գիտէ թէ այդ անտանելի տանջանքների համար ու՞մ դիմէ. որ իր րիւրաւոր ցաւերի համար մի ճար անէ. բողոքելը— գանգատվելն անգամ մի վտանգ է համարում գիւղացին իր համար. ի նկատի ունենալով տիրապետող ճնշող րէժիմը, ո՞վ կը համարձակվի ձայն-ծպտուն բարձրացնել «ազնւականների» առաջ... եւ նրանք Թողնում են տուն տեղ ու հեռանում Ռուսաստանի քաղաքներից մէկի մի անկիւնում ազատ չունչ քաշելու համար «աւելի լաւ է այստեղ երեքս ազատ զգալով մեզ սոված ապրենք ու քան Թէ մեր հայրենի հողում ամեն օր ձեծի եւ բռնութիւնների ենթարկվելով ապրենք»... կրկնում են նրանք։ Ապացոյցներ որքա՛ն ուզէք։ Հարցրէք Ղարաբաղից քաղաք Թափվող իւրաքանչիւր գիւղացու եւ նա ձեզ կը պատմէ իր ցաւերը եւ իր գաղթելու գլխաւոր պատճառը։

Սա մի չատ ցաւալի երեւոյթ է, որի ապագան մռայլ է եւ սարսափելի։

Դատարկվում են մեծ ու փոքր գիւղերը, հալածանքից ու բռնութիւնից ազատուելու համար, նրանք, որոնք դժբաղդութիւն են ունեցել ինքնապաշտպանութեան համար «զինուորի» անուն ստանալու, հայ գիւղերի համար մէկ-մէկ հրէշ են դարձել եւ ծծում են նրանց արիւնը։

Պատրաստ ենք հաստատելու անկեղծ զաչնակցականի հետեւեալ ճշմարիտ տողերը որ «օր ցերեկով մտնում են գիւղերը փող. ճուտ եւ այլն պահանջում ծեծի սպառնալիքով»։ Մենք վարանդեցիներս բողոքում ենք եւ միաժամանակ պահանջում. որ այս օրինակ գործողութիւններին վերջ տանելի դրութիւնը. չըը նրանց համար պատրաստվում է հարազատների ձեռքով։ Մենք ամբողջ սրտով ու հոգով միանում ենք. անկեղծ զաչնակցականի յայտնած ճշմարիտ ու անկեղծ բողոքին, Թող հանգիստ Թողնեն հայ գիւղացուն. յօնքը չինելու տեղ, աչքն էլ չը հանեն։

Այդ ձրիակերները, որոնք մարակի ապառնալիքով հայ գիւղացուն Թալանում են օր ցերեկով, խլում են նրանցից ապրուստի վերջին մէյոցը Թող լաւ իմանան, որ նրանք պատասխանատու են ժողովրդի արդար զարոյթի առաջ... համբերութիւնն էլ չափ ու սահման ունի, ի չարը մի գործ դնէք ժողովրդի համբերութիւնը... անարդարութիւնը չափ ու սահմանից անցնում է, ժողովուրդը հոգեպէս ճնշվում է եւ չը գիտէ թէ այդ անտանելի տանջանքների համար ու՞մ դիմէ. որ իր րիւրաւոր ցաւերի համար մի ճար անէ. բողոքելը— գանգատվելն անգամ մի վտանգ է համարում գիւղացին իր համար. ի նկատի ունենալով տիրապետող ճնշող րէժիմը, ո՞վ կը համարձակվի ձայն-ծպտուն բարձրացնել «ազնւականների» առաջ... եւ նրանք Թողնում են տուն տեղ ու հեռանում Ռուսաստանի քաղաքներից մէկի մի անկիւնում ազատ չունչ քաշելու համար «աւելի լաւ է այստեղ երեքս ազատ զգալով մեզ սոված ապրենք ու քան Թէ մեր հայրենի հողում ամեն օր ձեծի եւ բռնութիւնների ենթարկվելով ապրենք»... կրկնում են նրանք։ Ապացոյցներ որքա՛ն ուզէք։ Հարցրէք Ղարաբաղից քաղաք Թափվող իւրաքանչիւր գիւղացու եւ նա ձեզ կը պատմէ իր ցաւերը եւ իր գաղթելու գլխաւոր պատճառը։

Սա մի չատ ցաւալի երեւոյթ է, որի ապագան մռայլ է եւ սարսափելի։

Դատարկվում են մեծ ու փոքր գիւղերը, հալածանքից ու բռնութիւնից ազատուելու համար, նրանք, որոնք դժբաղդութիւն են ունեցել ինքնապաշտպանութեան համար «զինուորի» անուն ստանալու, հայ գիւղերի համար մէկ-մէկ հրէշ են դարձել եւ ծծում են նրանց արիւնը։

Պատրաստ ենք հաստատելու անկեղծ զաչնակցականի հետեւեալ ճշմարիտ տողերը որ «օր ցերեկով մտնում են գիւղերը փող. ճուտ եւ այլն պահանջում ծեծի սպառնալիքով»։ Մենք վարանդեցիներս բողոքում ենք եւ միաժամանակ պահանջում. որ այս օրինակ գործողութիւններին վերջ

Ա. ՃԻՏԱՆԵԱՆ

26

ԱԻԱԶԱԿԱՊԵՏԸ

ՄԱՄՆ ԱՒԱԶԻՆ

ՆԱՒԷԶԱՐ...

(Շար. նախորդ Թիւէն)

—

Այս տեսակցութենէն օր մ՚ետքը, ֆաքիրը նորէն եկաւ եւ իմացուց թէ վտահելի ու հաւատարիմ կին մը գտած էր։

— Աստուած քու քայլերդ առաջնորդէ՛, մրմնջեց մեծ–հանըմ՝ սիրտը եղած ձայնով մը։ Երախտապարտ եմ այդ մասին. ո՛վ գաթի մարդ։

Արդարեւ, նոյն իրիկուն տարիքոտ, միջահասակ, տրտմալի կերպարանքով կին մը հկաւ։

Կինը ծածկուած էր հնամաշ ֆէրաճէյի մը տակ, որ մինչեւ կրունկները կիջնէր ծալքերուած ձեւով մը։

— Ի՞նչէ անունդ, հարցուց մեծ–հանըմ՝ կատարեալ պաղարիւնութեամբ մը։

— Սէֆի՞լ է մեծ-հանըմ պատասխանեց նորեկ կինը գողդոջելով։

— Սէֆի՞լ... ի՛նչ տարօրինակ անուն մ՚ունիս, կնի՛կ զաւակ, նկատել տուաւ մեծ–հանըմ։ Այս տարիքիս հասած եմ, դե՛ռ առաջին անգամն է որ ատանկ անուն մը կը լսեմ։

— Իրա՛ւ է... չատ քիչ կը պատահի ասանկ անուն մը գործածել ...։ Եւ արդէն մանկութեան ժամանակ չ՚է դրուած... ա՛խ. Թշուառութիւնս է՝ որ այդ անունն առած է, ի՞նչ ըսեմ։

Մեծ–հանըմ ժպտեցաւ։ Դահլիճին մէջ գտնուած սպասուհիներուն առջեւը բոլորովին անպիտակից ձեւացնելով ինքզինքը՝ պարտաւորուած էր այդ կերպ հարցումներ ընել, որպէսզի կասկածի մը տեղի չը տար։ Մինչեւ իսկ հարցուց.

— Ուսկի՞ց իմացար որ սպասուհիի մը պէտք ունէի։

—Բարի ֆագիրէ մը, պատասխանեց Սէֆիլ հանըմ։

— Հ՚ա իր՛աւ է... անցեալները խօսք եղաւ, ես բան Թէ սպասուհիի մը պէտք ունիմ, ի՛նչ որ է. չնորհակալ եմ։ Գալով քու պաշտօնիդ՝ պ՚էտքէ ներքին մաքրութիւնը վրադ առնես։

— Աչեն՛այն սիրով։

Մեծ–հանըմ առաջնորդեց կինը դէպի դահլիճը, ցոյց տուաւ մաքրուելու առարկաներն ու յետոյ Նաւէզարին ներքնատեսնեակը տարաւ։

Նաւէզար գնացած էր։

— Թո՛ղ քնանայ, մրմնջեց մեծ–հանըմ։ Երթ՛անք...։

Ու երկուքնալ դուրս եկան ներքնատեսնեակէն՝ անոր դուռը կամաց մը դոցելով։

ՍԷՖԻԼ-ՀԱՆԸՄ

—

Սէֆիլ հանըմ բոլոր գիշերն անքուն անցուց ապարանքին մէջ։

— Ո՛ւֆ, բարի Աստուա՛ծ, վերջապէս գիշերը վրաս, կը բացականչէր Թշուառ կինն ինքնիրեն։ Ամբողներով Թափառեցա՛յ... մուրացի՛... ամեն տեսակ նախատինքներու հանդէպ վիզս ծռեցի՛... մինչեւ որ այս սեմերէն ներս մտայ...։ Չ՚է, ալ չ՚եմ կրնար համբերել... չ՚եմ կրնար դիմանալ։ Գիշերուան խաւարը կը խղդէ զիս։

Այսպէս կը մնմնջոսէր անխնայ Թեղը չ՚էր վառած, որպէսզի կասկածի տեղի չըտար։

Առտուն, արեւը չը ծագած, առաւաւելը ու սկսաւ դահլիճը մաքրել։ Ապարանքին միւս սպասուհիները վար իջան ամենքնալ ու՝ իրենց պաշտօններուն համաձայն՝ պատրաստութիւններ ըրին։

ՊԱՀԿԱ ԻՐ ՆԿՅՈՒՏ-ՏԱՊԵՐԻ.

Մեսրոպ ծերուկը գրեթե ոտքի վրա էր. նա ուզում էր գնալ, բայց Նկյուտ-Տապերի ձեռքը նրան թույլ չէր տալիս:

— Ո՞ւր ես գնում, հայրիկ, մենք դեռ քեզ հետ շատ խոսելու բան ունենք... — ասում էր նա:

— Ես՞... ասելու բան չունեմ... ես... — պատասխանում էր ծերունին:

— Ո՛չ, ես գիտեմ, որ դու ինձ հետ ունես շատ խոսելու բան, — ասում էր Նկյուտ-Տապերը, — ես գիտեմ, որ դու ինձ հետ ունես շատ խոսելու բան, — ասում էր Նկյուտ-Տապերը, — ես գիտեմ, որ դու ինձ հետ ունես շատ խոսելու բան:

Մեսրոպ ծերուկը նստեց, նայեց Նկյուտ-Տապերի աչքերի մեջ և ասաց.

—

Ռուսահայ գրականության մեծ ներկայացուցիչներից մեկի՝ Ալեքսանդր Կուպրինի ծննդյան 100-ամյակի առթիվ Ռուսաստանի Գրողների միությունը կազմակերպել է հոբելյանական երեկո։ Երեկոյին ելույթ ունեցավ նաև Կուպրինի դուստրը՝ Քսենիա Կուպրինան։ Նա պատմեց հոր կյանքի ու ստեղծագործության մասին։

Ալեքսանդր Կուպրինը ծնվել է 1870 թվականին Պենզայի նահանգի Նարովչատ քաղաքում։ Նրա հայրը ծառայել է որպես ոստիկանապետ։ Մանկությունն անցել է Նարովչատում, Մոսկվայում, Ռյազանում։ Ռյազանում նա ավարտել է գիմնազիան։ Ապա ընդունվել է Մոսկվայի ռազմական ուսումնարանը։ Ուսումնարանն ավարտելուց հետո նա ծառայել է Դնեպրի հետևակային գնդում։ Ծառայության տարիներին Կուպրինը սկսել է գրել։ Նրա առաջին պատմվածքները տպագրվել են 1889 թվականին։

Կուպրինը ծառայությունից հեռացել է 1894 թվականին։ Նա ապրել է Կիևում, Պետերբուրգում, Մոսկվայում, Ղրիմում։ Կուպրինի ստեղծագործության մեջ կարևոր տեղ են գրավում նրա ճանապարհորդությունները։ Նա շատ է ճանապարհորդել Ռուսաստանում, Ֆրանսիայում, Իտալիայում, Եգիպտոսում։ Ճանապարհորդությունների տպավորությունները նա արտացոլել է իր պատմվածքներում։

Կուպրինի ստեղծագործության մեջ կարևոր տեղ են գրավում նաև զինվորական կյանքի նկարագրությունները։ Նա գրել է զինվորական կյանքի մասին մի շարք պատմվածքներ, որոնցում ցույց է տվել զինվորական կյանքի ստրկական պայմանները։ Այդ պատմվածքներից են «Ուղեգրություն», «Ուղեկիցներ», «Ռեկրուտներ», «Ռազմական գիշերներ» և ուրիշներ։

Կուպրինի ստեղծագործության մեջ կարևոր տեղ են գրավում նաև ռուս ժողովրդի կյանքի նկարագրությունները։ Նա գրել է ռուս ժողովրդի կյանքի մասին մի շարք պատմվածքներ, որոնցում ցույց է տվել ռուս ժողովրդի ծանր կյանքը